ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 սեպտեմբերի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

119
(3328)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՐԵՆՑ՝ ՄԻԼԻՈՆՆԵՐ, ԹՈՇԱԿԱՌՈՒԻՆ՝ ՀԱՋԱՐՆԵՐ

Կառավարությունը երեկ հավանություն տվեց «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններին, եւ փաստաթղթից պարզ է դառնում՝ իշխանությունը որոշել է պետական բյուջեի հաշվին էականորեն թանկացնել առաջին հերթին հենց բարձրաստիճան պաշտոնյաների աշխատանքը:

Նախագծով վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնային դրույքաչափի գործակիցը 19-ից դառնում է 32: 83 հազար 200 դրամ բազային աշխատավարձի պայմաններում վարչապետի աշխատավարձը կհասնի 2 մլն 662 հազար 400 դրամի:

Նույն՝ 2 մլն 662 հազար դրամի սահմանագծին է հասնում նաեւ Հանրապետության նախագահի աշխատավարձը: Փոխվարչապետների աշխատավարձը նախատեսվում է հասցնել 2 մլն 163 հազար դրամի, նույնքան կստանան նախարարներն ու վարչապետի աշխատակազմի ղեկավարը: Նախարարի աշխատավարձը, ըստ ներկայացված հաշվարկի, գործող 998 հազար դրամից ավելի քան կրկնապատկվում է: ԱԺ նախագահը կստանա մոտ 2 մլն 496 հազար դրամ, փոխնախագահը՝ 2 մլն 163 հազար, պատգամավորը՝ 1 մլն 497 հազար 600 դրամ: Մարզպետի աշխատավարձը 832 հազարից դառնում է շուրջ 1 մլն 498 հազար դրամ, նախարարի տեղակալինը՝ 707 հազարից՝ 1 մլն 414 հազար դրամ: Եվ սա այն Հայաստանում, որտեղ, Ազգային վիճակագրական կոմիտեի վերջին հրապարակված տվյալներով, բնակչության 21.7 տոկոսն աղքատ է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՔՊ-ում վերջին շրջանում լուրջ գործընթաց է սկսվել երկու անձի շուրջ՝ ԱԺ փոխնախագահ Հայկ Կոնջորյանի եղբոր՝ Ավետ Կոնջորյանի եւ ՔՊ խմբակցության նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ իշխանական վերնախավը որոշում է կայացրել մանրամասն ուսումնասիրել երկու անձանց վարքագծին առնչվող բոլոր հանգամանքները: Հարցը նախ պետք է քննարկվի ՔՊ վերահսկող հանձնաժողովում, որտեղ կուսակցական կառույցը պետք է ուսումնասիրի առկա փաստերը, համադրի հանգամանքներն ու դրանից հետո որոշում կայացնի նրանց հետագա կարգավիճակի վերաբերյալ: Իշխանական շրջանակներում այս երկու անձինք արդեն դիտարկվում են որպես կուսակցության համար լուրջ գլխացավանք: Պատճառը նրանց շուրջ վերջին շրջանում առաջացած սկանդալներն ու հանրային լայն արձագանք ստացած պատմություններն են: Ավետ Կոնջորյանի դեպքում խոսքը վերջին շրջանում աղմուկ բարձրացրած միջադեպի մասին է, որի շրջանակում նա հայտնվել էր ծեծկռտուքի եւ, ըստ հրապարակված տեղեկությունների, խուլիգանական վարքագծի հետ կապված պատմության կենտրոնում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ազգային ժողովի ամբիոնից իր առաջին ելույթով խայտառակված ՔՊ-ական պատգամավոր Արաքսյա Վարդանյանը քաղաքական դաշտում, պարզվում է, նորեկ չէ: Ընդամենը հինգ տարի առաջ նա բոլորովին այլ քաղաքական թիմում էր եւ ընտրողներին զգուշացնում էր պետականությունը կորցնելու ու «ծնկի գալու» վտանգի մասին: Նախորդ օրը Վարդանյանը ԱԺ ամբիոնից պատմեց իր դպրոցական տարիներից մի դրվագ՝ ասելով, որ «մացեմածիկայի» ժամին գրատախտակին գնալուց առաջ ձեռքերը տաքացնում էր վառարանի վրա, որպեսզի կարողանա կավիճը բռնել ու խնդիր լուծել: Ի դեպ, պատգամավորը խոսում էր ոչ թե «գրատախտակի մոտ գնալու», այլ հենց գրատախտակի գնալու մասին: Սակայն, «մացեմածիկայի» շուրջ աղմուկից զատ, ուշագրավ է նաեւ նորահայտ ՔՊ-ականի քաղաքական անցյալը: Արաքսյա Վարդանյանը 2021 թվականի խորհրդարանական ընտրություններին մասնակցել է Սամվել Բաբայանի «Ազատական» կուսակցության ցուցակով: Նա ցուցակի 5-րդ համարն էր: Այսօր արդեն Վարդանյանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր է: ԱԺ պաշտոնական կայքն էլ նրան ներկայացնում է որպես ՔՊ անդամ եւ խմբակցության պատգամավոր, որը Փարաքարի ավագանուց է խորհրդարան գնացել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը, Սահմանադրական դատարանի դատավորների թափանցիկությունն ու հանրության համար նրանց գույքային դրությունը հասանելի դարձնելու նպատակով, շարունակում է ուսումնասիրել եւ ներկայացնել ՍԴ դատավորների հայտարարագրած ունեցվածքը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՍԴ դատավոր Վլադիմիր Վարդանյանի հայտարարագրերը՝ներկայացնելով, թե այս տարիների ընթացքում ինչպես են փոփոխվել նրա անշարժ գույքը, եկամուտները, դրամական միջոցներն ու վարկային պարտավորությունները: 2021 թվականին Վարդանյանի հայտարարագրած ընդհանուր եկամուտը կազմել է 8 մլն 710 հազար 40 դրամ: Ամբողջ գումարը ներկայացված է որպես Ազգային ժողովից ստացած աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված այլ վճարումներ: Այդ ժամանակ նրա անունով եղել է մեկ բնակարան Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում: Գույքը ձեռք է բերվել 2001 թվականի օգոստոսի 27-ին՝ժառանգությամբ: Տարեվերջին Վարդանյանի վարկային պարտավորության մնացորդը կազմել է 573 հազար 942.2 դրամ: Բանկային հաշիվներում տարվա սկզբին նա ունեցել է 173 հազար 505.84 դրամ, իսկ տարեվերջին՝ 0 դրամ: Միաժամանակ կանխիկ դրամական միջոցները տարվա ընթացքում աճել են՝ 2,500 ԱՄՆ դոլար, 800 հազար դրամ եւ 2,150 եվրո կազմելով տարեվերջին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՏԱՐԲԵՐԱԿԵԼ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ»

ArmLur.am-ը զրուցել է ՔՊ վերահսկող հանձնաժողովի նախագահ Լեւոն Լեւոնյանի հետ Մեղրիում եւ Լճաշենում ապօրինի հանքեր շահագործելու դեպքերի վերաբերյալ:

- Պարոն Լեւոնյան, քանի որ Դուք նաեւ եղել եք Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ, տեղեկություններ կունենաք, որ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում ապօրինի հանքարդյունահանման դեպքեր են արձանագրվել: Վերջերս իրավապահները բացահայտեցին Լճաշենի դեպքը, ինչպես նաեւ Մեղրիում տեղի ունեցած դեպքը, որի շրջանակում համայնքապետը կալանավորվեց: Դուք, որպես տեսչական մարմնի նախկին ղեկավարի տեղակալ, ինչպե՞ս եք գնահատում իրավիճակը: Ինչո՞ւ պետք է նման դեպքերը բացահայտեն իրավապահները, այդ դեպքում ինչո՞վ է զբաղվում տեսչական մարմինը:

- Տեսչական մարմինն իր կառուցվածքով ունի մոտ 170-180 աշխատակից, որոնց ամբողջ թվաքանակը համալրված չէ: Միաժամանակ ամբողջ Հայաստանում ունենք նաեւ տարածքային բաժիններ: Ֆիզիկապես անհնար է ամբողջ ծավալով վերահսկողություն իրականացնել Հայաստանի բոլոր հանքավայրերում: Օրինակ՝ Հայաստանում կա ավելի քան 30 մետաղական հանքավայր՝ մոտ 33, իսկ ոչ մետաղական հանքավայրերի՝ ավազի, կավի, բազալտի, քարի, տուֆի, մարմարի, տրավերտինի եւ այլ հանքավայրերի թիվը հասնում է մոտ 200-300-ի: Այդքան մեծ քանակի հանքավայրերի նկատմամբ մշտական ֆիզիկական վերահսկողություն իրականացնելը պարզապես հնարավոր չէ: Այստեղ այլ հարց է, որ պետք է կիրառվեն թվային տեխնոլոգիաներ եւ վերահսկողության նոր գործիքներ: Տեսչական մարմինը, առնվազն այն ժամանակահատվածում, երբ ես այնտեղ աշխատում էի, արդեն սկսել էր այդ ուղղությամբ աշխատանքներ իրականացնել եւ ուներ բավական բարձր արդյունքներ ու ցուցանիշներ: Ինչ վերաբերում է ապօրինի շահագործմանը, ապա ավելի ճիշտ կլինի ասել, որ խոսքը ոչ թե «ապօրինի հանքերի շահագործման», այլ հանքավայրերում իրականացվող ապօրինի գործողությունների մասին է: Եթե կա հանքավայր, այն կարող է լինել փակ, կոնսերվացված կամ ընդհանրապես տվյալ պահին շահագործման թույլտվություն չունենալ: Սակայն կարող են լինել մարդիկ, որոնք, օգտվելով իրավիճակից կամ վերահսկողության որոշակի բացերից, տարբեր վայրերում՝ անտառներում, լեռնային տարածքներում եւ այլ դժվարամատչելի հատվածներում, իրականացնում են ապօրինի ընդերքօգտագործում: Դա, ըստ էության, ընդերքից եւ պետությունից գողություն է: Լճաշենի դեպքի հետ կապված՝ եթե ճիշտ եմ հիշում, տվյալ հանքավայրի շահագործման թույլտվության ժամկետը նախկինում ավարտվել էր: Միեւնույն ժամանակ տեսչական մարմինն այնտեղ իրականացրել է համապատասխան գործողություններ եւ արձանագրել է նաեւ ապօրինի ընդերքօգտագործման փաստեր: Այստեղ, սակայն, պետք է տարբերակել գործընթացները: Իրավապահ համակարգն իր գործառույթն ունի եւ հենց դրա համար է, որպեսզի արձագանքի իրավախախտումներին, իրականացնի համապատասխան քննություն եւ, անհրաժեշտության դեպքում, պատասխանատվության ենթարկի մեղավոր անձանց: Օրինակ՝ ոստիկանությունը կամ էկոպարեկային ծառայությունը, որն իրականացնում է բնապահպանական հսկողություն, կարող է նույնպես հայտնաբերել ենթադրյալ իրավախախտներին կամ ապօրինի ընդերքօգտագործմամբ զբաղվող անձանց: Դա նորմալ է, քանի որ տարբեր կառույցներ ունեն տարբեր գործառույթներ:

- Բայց չէ՞ որ տեսչական մարմինն էլ ստեղծվել է հենց այն նպատակով, որպեսզի վերահսկի, թե ինչ է կատարվում Հայաստանի սարերում, լեռներում եւ այլ տարածքներում: Ինչպե՞ս պետք է պատկերացնել այդ վերահսկողությունը:

- Այստեղ պետք է տարբերակել հսկողությունը, պահպանությունը եւ վերահսկողությունը: Վերահսկողությունն արդեն ամբողջ գործընթացի վերջնական փուլն է: Օրինակ՝ անտառների դեպքում անտառների պահպանությունն իրականացնում է էկոպարեկային ծառայությունը: Կան նաեւ համապատասխան անտառտնտեսություններ, որոնք իրենց գործառույթներն են իրականացնում տեղերում: Պահպանության նպատակն է կանխել ապօրինի անտառահատումները, կենդանական աշխարհի նկատմամբ ապօրինի գործողությունները, ապօրինի որսը եւ նմանատիպ դեպքերը: Իսկ արդեն դրա վերահսկողությունը՝ թե որքանով է այդ պահպանությունն իրականացվում, ինչ արդյունավետությամբ է իրականացվում՝ լավ, վատ կամ բավարար, գնահատվում է հաջորդ փուլում: Սա չի նշանակում, որ եթե տեսչական մարմինը հայտնաբերում է իրավախախտում կամ, օրինակ, ապօրինի անտառահատման դեպք, ապա չի արձագանքում: Իհարկե, արձագանքում է: Պարզապես այս համակարգում տարբեր օղակներ կան, եւ դրանց միջեւ գոյություն ունի գործառույթների որոշակի տարանջատում եւ գրադացիա:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ

2026 թվականի սեպտեմբերի 16-ին Ռուբեն Վարդանյանը հրապարակային ուղերձ է հղել Ադրբեջանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Սաբինա Ալիեւային, որն ավելի վաղ պատրաստակամություն էր հայտնել աջակցելու հայ դատապարտյալների իրավունքների պաշտպանության հարցում:

Ռուբեն Վարդանյանը, որը Հայաստանի եւս տասնութ քաղաքացիների հետ գտնվում է Ումբակի քրեակատարողական համալիրում, իր ուղերձում թվարկում է մի շարք խախտումներ, որոնք հակասում են առաջին հերթին հենց Ադրբեջանի օրենսդրությանը:

Նա հղում է կատարում Պատիժների կատարման օրենսգրքին եւ դատապարտյալների իրավունքների մասին գրքույկին, որն այս տարվա ապրիլին Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը տրամադրել է բանտարկյալներին: Նա ընդգծում է, որ այդ իրավունքները պետք է պահպանվեն՝ անկախ մեղադրանքի հոդվածից, ազգությունից, կրոնական պատկանելությունից եւ քաղաքացիությունից:

Նրա բարձրացրած խնդիրների թվում են՝ բանտարկյալների մի մասի համար ամենշաբաթյա հեռախոսազանգերի բացակայությունը եւ տեսազանգերի անհասանելիությունը, ինչի պատճառով նրանցից ոմանք գրեթե երեք տարի չեն տեսել իրենց երեխաներին, նույնիսկ սեփական միջոցներով բժշկական հետազոտություններ հանձնելու անհնարինությունը, նոտարական ծառայությունների մերժման պատճառով հարազատների անունով լիազորագիր ձեւակերպելու անհնարինությունը, ֆիզիկական վարժությունների սահմանափակումը շաբաթական մեկ անգամ՝ 20-40 րոպեով՝ օրական սահմանված մեկ ժամի փոխարեն, ինչպես նաեւ դիմումներին եւ բողոքներին գրավոր պատասխանների բացակայությունը:

Առանձին Ռուբեն Վարդանյանն անդրադառնում է այն հանգամանքին, որ Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործունեության դադարեցումից հետո բանտարկյալները զրկվել են ընտանիքների հետ կապի կարեւոր ուղուց. նրանց մեծ մասը ծանրոցներ չի ստանում: Նա նաեւ նշում է, որ շատերը հնարավորություն չունեն բանտային խանութից սննդամթերք գնելու եւ հեռախոսազանգեր կատարելու, քանի որ միջոցներ չունեն:

Նա հիշեցնում է նաեւ իր կնոջ՝ Վերոնիկա Ջոնաբենդի նախաձեռնության մասին, որը պատրաստ է մեկնել Բաքու, հանդիպել Մարդու իրավունքների պաշտպանի եւ Հայաստանի դատապարտված քաղաքացիների հետ, նրանց փոխանցել մոտ հազար նամակ, ծանրոցներ եւ անհրաժեշտ իրեր: Նրա դիմումները մնացել են անպատասխան, իսկ այլընտրանքային լուծում չի առաջարկվել:

Ռուբեն Վարդանյանն առաջարկել է Մարդու իրավունքների պաշտպանին հանդիպել բանտարկյալների հետ եւ հետեւել իրենց իսկ օրենքներին. «Կարեւոր չէ, թե դեռ որքան ժամանակ կանցկացնենք Ումբակիում: Խնդրում եմ՝ հետեւեք ձեր իսկ օրենքներին»:

ՇՈՒՏՈՎ ԿՅԱՆՔԻ ԿԿՈՉՎԵՆ

ԵՄ դեսպան Մարագոսը հայտարարել է, որ հայկական ապրանքների համար նախատեսված առեւտրային արտոնությունները շուտով կկիրառվեն՝ թույլ տալով դրանց մուտք գործել եվրոպական շուկա առանց մաքսատուրքերի: Ըստ Լուրեր.com-ի՝ Եվրոպական խորհրդարանը արդեն կողմ է քվեարկել այս առաջարկին, որն ուղղված է դեպի ավելի մտերմի հայ-եվրոպական հարաբերություններ եւ Հայաստանի արտահանման աջակցություն: Եվրոպական Միությունն ակնկալում է, որ հայկական ապրանքների նկատմամբ նախատեսված առեւտրային արտոնությունները շատ շուտով կգործարկվեն. «Ազատության» փոխանցմամբ՝ ասել է ԵՄ դեսպանն ու շեշտել Բրյուսելի առաջարկած առեւտրային արտոնությունները, որոնք հնարավորություն կտան բազմաթիվ հայկական ապրանքների ԵՄ շուկա մտնել առանց մաքսատուրքերի: Նրա խոսքով՝ Հայաստանի եւ ԵՄ-ի հարաբերությունները երբեք այսքան մոտ չեն եղել, եւ եվրոպական կառույցն աշխատում է դրանք առավել շոշափելի դարձնելու ուղղությամբ: Մարագոսի խոսքով՝ Հայաստանի համար նախատեսված նոր առեւտրային արտոնությունների շրջանակում հայկական մի քանի հարյուր տեսակի ապրանքներ հնարավորություն կունենան եվրոպական շուկա մտնել առանց մաքսատուրքերի: «Այս շաբաթ մենք տեսանք՝ Եվրոպական խորհրդարանը կողմ քվեարկեց այս առաջարկին, եւ ակնկալում ենք, որ սա շատ շուտով կպաշտոնականացվի»,- ասել է ԵՄ դեսպանը:

ՄԻԼԻԱՐԴԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Ալեքսեյ Շեւցովը զգուշացրել է Երեւանին՝ արգելելով ռուսական ձեռնարկությունների նկատմամբ «ռեյդերային զավթումները»: Ըստ նրա՝ հայկական իշխանությունները կիրառում են «կրկնակի ստանդարտներ» եւ փորձում են արժեզրկել ռուսական ակտիվները, ինչը խոշոր հարված կլինի Հայաստանի տնտեսության համար՝ հաշվի առնելով ռուսական ներդրումների ծավալը եւ աշխատատեղերի ստեղծումը, գրում է Լուրեր.com-ը: ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ Ալեքսեյ Շեւցովը Երեւանին զգուշացրել է ռուսական ձեռնարկությունների «ռեյդերային զավթումների» անթույլատրելիության եւ հնարավոր հետեւանքների մասին: «Հայաստանում գործող ռուսական բիզնեսի նկատմամբ դրսեւորվում է ոչ բարեկամական վերաբերմունք եւ կիրառվում են բացահայտ «կրկնակի ստանդարտներ», իսկ այն, ինչ տեղի է ունենում այն ձեռնարկությունների եւ ամբողջ ոլորտի հետ, որոնցում Ռուսաստանը միլիարդավոր ներդրումներ է կատարել, դժվար է այլ կերպ բնորոշել, քան «ռեյդերային զավթում»: Նման մարտավարությունը իսկական «հարված» կլիներ Հայաստանի տնտեսության համար՝ հաշվի առնելով, որ ռուսական բիզնեսները տասնյակ հազարավոր աշխատատեղեր են ստեղծել հանրապետությունում եւ արդյունավետորեն կառավարում են իրենց ակտիվները օրինական ճանապարհով՝ զգալի ներդրում ունենալով Հայաստանի ՀՆԱ-ում», - ասել է ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալը:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՊԵՏԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսաստանում սեպտեմբերի 18-20-ը անցկացվում են Պետդումայի՝ խորհրդարանի ստորին պալատի ընտրությունները: Այն 2022 թվականին Ուկրաինայում Ռուսաստանի կողմից լայնածավալ ռազմական գործողությունների մեկնարկից հետո անցկացվող առաջին խորհրդարանական ընտրություններն են:

Ընտրություններին զուգահեռ անցկացվում են նաեւ տեղական ընտրություններ: 11 մարզերում ընտրվելու են նահանգապետեր, իսկ 39 մարզերում՝ տարածաշրջանային օրենսդիր մարմինների պատգամավորներ: Քվեարկությունը տեւելու է երեք օր, իսկ ընտրելու իրավունք ունի շուրջ 111 միլիոն քաղաքացի: Թույլատրվում է նաեւ էլեկտրոնային քվեարկությունը:

Պետդումայի 450 պատգամավորական մանդատների կեսը բաշխվելու է կուսակցական ցուցակներով, իսկ մյուս կեսը՝ միամանդատ ընտրատարածքներում անցկացվող ընտրությունների միջոցով:

Գործող խորհրդարանում գերիշխող դիրք ունեցող «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը, որը աջակցում է նախագահ Վլադիմիր Պուտինին, կրկին մասնակցում է ընտրություններին: Կուսակցությունը 2021 թվականի ընտրություններում ստացել էր Պետդումայի մանդատների ավելի քան երկու երրորդը: Նրա ցուցակը գլխավորում են ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը եւ Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը:

Ընտրություններին մասնակցում են նաեւ Ռուսաստանի Կոմունիստական կուսակցությունը, Լիբերալ դեմոկրատական կուսակցությունը, «Արդար Ռուսաստան», «Նոր մարդիկ» եւ մի շարք ավելի փոքր կուսակցություններ:

Միեւնույն ժամանակ, «Յաբլոկո» լիբերալ կուսակցությունը, որը հրապարակման համաձայն գրանցված կուսակցություններից միակն էր, որ դեմ էր պատերազմին, օգոստոսին Գերագույն դատարանի որոշմամբ հանվել է կուսակցական ցուցակից: Կուսակցությունը շարունակում է մասնակցել միայն միամանդատ ընտրատարածքների մրցապայքարին:

Ռուսաստանի իշխանությունները ընտրությունները ներկայացնում են որպես քաղաքացիների կամարտահայտության հնարավորություն, մինչդեռ քննադատները պնդում են, որ իրական ընդդիմության սահմանափակ մասնակցության պայմաններում արդյունքը մեծապես կանխորոշված է:

Ռուսաստանում Պետդումայի նախորդ ընտրություններում «Միասնական Ռուսաստան»-ը մշտապես հաղթել է: 2021 թվականի ընտրություններից հետո անկախ դիտորդներն ու վիճակագիրները վիճարկել էին կուսակցության պաշտոնական արդյունքները, իսկ իշխանությունները մերժել են համատարած կեղծիքների վերաբերյալ մեղադրանքները:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԾԱԽՍԵՐ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ ՄԵԿՆԵԼ ԳԵՐՄԱՆԻԱ

ArmLur.am-ը ավելի վաղ գրել էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 18-ին աշխատանքային այցով մեկնելու է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ Վիսբադեն: ՀՀ վարչապետի N 920-Ա որոշմամբ հաստատվել է Գերմանիա մեկնող կառավարական պատվիրակության կազմը, ինչպես նաեւ սահմանվել են գործուղման հետ կապված ծախսերի ֆինանսավորման աղբյուրները:

Որոշման համաձայն՝ Փաշինյանի՝ Գերմանիայում գտնվելու ժամանակահատվածում ՀՀ վարչապետի պարտականությունների կատարումը դրվել է փոխվարչապետ Միեր Գրիգորյանի վրա:

Կառավարական պատվիրակության կազմում ընդգրկվել են Նիկոլ Փաշինյանը, Մելանյա Հարությունյանը, Կարեն Գասպարյանը, Արմեն Խաչատրյանը, Ալեքսանդր Աբրահամյանը, Արման Շահինյանը, Տիգրան Մեհրաբյանը, Գեւորգ Գալստյանը, Խաչատուր Ադումյանը, Արարատ Միրզոյանը եւ Գագիկ Վանոյանը:

Պատվիրակության կազմում ընդգրկվել է նաեւ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Ենգիբարյանը:

Որոշմամբ սահմանվել է, որ Նիկոլ Փաշինյանի, Մելանյա Հարությունյանի, Կարեն Գասպարյանի, Արմեն Խաչատրյանի, Ալեքսանդր Աբրահամյանի, Արման Շահինյանի, Տիգրան Մեհրաբյանի եւ Գեւորգ Գալստյանի օրապահիկի ծախսերը, ինչպես նաեւ հուշանվերների ձեռքբերման եւ թարգմանչական ծառայությունների հետ կապված ծախսերը կատարվելու են ՀՀ վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին:

Նույն անձանց եւ Խաչատուր Ադումյանի գիշերավարձի, ինչպես նաեւ պատվիրակության ներկայացուցչական եւ փոխադրամիջոցների վարձակալության հետ կապված ծախսերը կատարվելու են ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

Արարատ Միրզոյանի գործուղման ծախսերը կատարվելու են ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության միջոցների հաշվին, իսկ Գագիկ Վանոյանինը՝ ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

Միաժամանակ, վարչապետի աշխատակազմի ղեկավարին հանձնարարվել է կազմակերպել սեպտեմբերի 18-ի Երեւան-Ֆրանկֆուրտ-Երեւան երթուղով չվերթը:

ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահին հանձնարարվել է աջակցել վարչապետի աշխատակազմին նշված չվերթի կազմակերպման հարցում:

Չվերթի կազմակերպման հետ կապված ծախսերը նույնպես կատարվելու են ՀՀ վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին:

Որոշումը ստորագրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ այցի շրջանակում Վիսբադենում՝ Հեսսենի դաշնային երկրամասային խորհրդարանում, հանդիսավոր արարողության շրջանակում Հարավային Կովկասում խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերի համար ՀՀ վարչապետին կշնորհվի Հեսսեյան Խաղաղության մրցանակը:

Հաջորդիվ Նիկոլ Փաշինյանը Ֆրանկֆուրտի արդյունաբերության եւ առեւտրի պալատում հանդիպում կունենա տեղի գործարարների հետ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄՆ-Ն ՎԻԶԱՆԵՐ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ

ԱՄՆ իշխանությունները վիզաներ են տրամադրել իրանական պատվիրակության անդամներին, այդ թվում՝ նախագահ Մասուդ Փեզեշքիանին եւ արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիին, որպեսզի նրանք ներկա գտնվեն հաջորդ շաբաթ Նյու Յորքում կայանալիք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային:

Այս մասին հաղորդում է NBC News-ը՝ վկայակոչելով Պետքարտուղարության ներկայացուցիչներից մեկին:

Այնուամենայնիվ, իրանական պատվիրակության անդամների նկատմամբ որոշակի սահմանափակումներ կգործեն:

«Ընդունող երկրի կարգավիճակից բխող մեր պարտավորություններին համապատասխան՝ Իրանի վարչակարգի հիմնական պատվիրակությունը կկարողանա մասնակցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի շաբաթվա միջոցառումներին: Պատվիրակության նկատմամբ կկիրառվեն տեղաշարժի սահմանափակումներ, ինչպես նաեւ, մեր քաղաքականությանը համապատասխան, արգելքներ կսահմանվեն շքեղության եւ այլ ապրանքների ձեռքբերման համար»,- հայտնել է NBC News-ի զրուցակիցը:

Չնայած իրանական պատվիրակությանը մուտքի վիզաներ տրամադրելուն՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմն, ըստ աղբյուրների, կրկին մերժել է Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբբասի մասնակցությունը Գլխավոր ասամբլեային՝ պատժամիջոցների պատճառով:

ՌՈՒԲԻՈՆ ԽՈՉԸՆԴՈՏԵԼ Է

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն վճռորոշ դեր է խաղացել Իրանի հետ պատերազմը դադարեցնելու հնարավոր համաձայնագրի խափանման գործում ԱՄՆ փոխնախագահ Ջ.Դ. Վենսի հետ Պակիստանում բանակցությունների ժամանակ, հաղորդում է NBC News-ը՝ հղում անելով թեմային ծանոթ աղբյուրին:

«Ապրիլյան մարաթոնյան հանդիպման ընթացքում (Պակիստանում) ամերիկացի բանակցողները սկսեցին անհանգստանալ. թվում էր, թե իրանցիները փոխում էին հնարավոր համաձայնագրի պայմանները: Այսպիսով, ընդմիջման ժամանակ նրանք զանգահարեցին Ռուբիոյին՝ հետագա քայլերի վերաբերյալ ուղղորդում ստանալու համար: Ռուբիոն համաձայնեց, որ նրանք չեն կարող ընդունել Իրանի առաջարկը: Համաձայնություն չի լինի», - հաղորդում է հեռուստաալիքը:

Հաղորդագրության մեջ նաեւ ընդգծվում է, որ Ռուբիոն միտումնավոր խուսափում է խաղաղության խորհրդակցությունների հանրային դեմքը լինելուց, Վենսին, ինչպես նաեւ հատուկ դեսպանորդներ Սթիվ Ուիթքոֆին եւ Ջարեդ Քուշներին ուղեւորություններ պատվիրակելուց:

Այնուամենայնիվ, ըստ հեռուստաալիքի, հենց ամերիկյան դիվանագիտության ղեկավարն է հանդես գալիս որպես «մոխրագույն կարդինալ»՝ պահպանելով վետոյի իրավունքը կարեւոր որոշումների վերաբերյալ փակ դռների հետեւում:

ՀԱՐՎԱԾԵԼ Է ԼՅԱՆԱՎԻՆ

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հաղորդել է, որ հարված է հասցրել Տոգոյի դրոշի ներքո ընթացող լցանավին, որը փորձել է «անօրինական անցում» կատարել Հորմուզի նեղուցով: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է IRNA գործակալությունը: ԻՀՊԿ-ի ռազմածովային ուժերը նշել են, որ գրոհից հետո նավում հրդեհ է բռնկվել: Նավը կանգնեցվել է: Ըստ կորպուսի՝ լցանավը փորձել է ջրային ուղով անցնել առանց իրանական կողմի թույլտվության՝ տրվելով ամերիկացի զինվորականների «հրահրմանն ու խաբեությանը»: ԻՀՊԿ-ի ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենց ռազմածովային ուժերի զինվորականները լիովին վերահսկում են ռազմավարական տեսակետից կարեւոր նեղուցը եւ «թույլ չեն տա որեւէ ագրեսորի անցնել այդտեղով»: «Հորմուզի նեղուցով անօրինական անցումը ոչնչի չի հանգեցնի, բացի խախտում թույլ տված նավի ոչնչացումից», - ընդգծվում է հայտարարության մեջ:

ԱՀԱՋԱՆԳ

ՄԱՐԶՊԵՏԸ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

Կոմիտասի 31 Գ հասցեում հարեւանների միջեւ կենցաղային թվացող վեճը հասել է ոստիկանություն, իսկ պատմության մյուս կողմում, ինչպես պարզվում է, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն է:

ArmLur.am ահազանգած Աշոտ Խաչատրյանը պատմում է, որ շուրջ երեք տարի իր ավտոմեքենան կայանել է շենքի բակում: Քանի որ աշխատում է որպես «Յանդեքս»-ի վարորդ եւ էլեկտրամոբիլ է շահագործում, առաջին հարկի պատին տեղադրել է նաեւ մեքենայի լիցքավորման սարք՝ հիմնականում գիշերային ժամերին մեքենան լիցքավորելու համար: Խաչատրյանի խոսքով՝ որոշ ժամանակ անց առաջին հարկի բնակչի ամուսինը պահանջել է ոչ միայն մեքենան այլեւս չկայանել այդ հատվածում, այլեւ պատից հեռացնել լիցքավորման սարքը: Քաղաքացին պնդում է՝ պահանջը կատարել է եւ լիցքավորման սարքը տեղափոխել ավելի հեռու հատված: Սակայն դրանով վեճը չի ավարտվել. ըստ նրա՝ հարեւանն արդեն պահանջել է ամբողջությամբ հեռացնել լիցքավորման սարքը եւ մեքենան ընդհանրապես չկայանել այդ տարածքում: Մինչդեռ իր բնակարանը երկրորդ հարկում է: Հարցն այստեղ արդեն դուրս է գալիս սովորական հարեւանական վեճի շրջանակից. եթե խոսքը շենքի ընդհանուր օգտագործման տարածքի մասին է, ապա ի՞նչ իրավական հիմքով կարող է որեւէ բնակիչ այն դիտարկել որպես իր բացառիկ օգտագործման տարածք եւ արգելել մյուս բնակչին այնտեղ մեքենա կայանել:

Ավելին՝ Աշոտ Խաչատրյանը պնդում է, որ վեճին միջամտել են նաեւ ոստիկանները, իրեն տարել, մի քանի ժամ պահել են, ինքն այդ պատմության արդյունքում հայտնվել է ոստիկանությունում:

Իսկ ո՞վ է, ըստ քաղաքացու, հարեւանական այս վեճի մյուս կողմը:

Խաչատրյանի պնդմամբ՝ առաջին հարկի բնակչի ամուսինը Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն է:

Այսպիսով՝ սովորական կայանատեղիի եւ էլեկտրամոբիլի լիցքավորման սարքի շուրջ վեճը վերածվել է շատ ավելի սկզբունքային հարցի՝ արդյո՞ք պետական բարձրաստիճան պաշտոնյայի մասնակցությամբ կենցաղային վեճում ոստիկանության ներգրավումը եղել է բացառապես իրավական հիմքով, եւ արդյո՞ք որեւէ մեկը կարող է բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ փաստացի բացառիկ իրավունք սահմանել:

ArmLur.am-ը խոսել է Աշոտ Խաչատրյանի եւ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ:

Այսպիսով, տեղական բդեշխները՝մարզպետները, փորձում են ամենուր թելադրել իրենց կամքը՝ոտնահարելով եւ հանրային շահը, եւ քաղաքացու իրավունքները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՄ ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

2026 թվականի սեպտեմբերին վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի աղմկահարույց հարցազրույցին եւ դրանում հնչեցված հայտարարություններին, հայտնել էր, որ դրանց առնչությամբ քրեական վարույթ է նախաձեռնվել՝ հավելելով, որ «ինչ-որ մեկը պետք է նստի այս գործով»:

ArmLur.am-ին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել, թե կոնկրետ ինչ վարույթի մասին էր խոսում վարչապետը:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Հայկ Սարգսյանի հնչեցրած հայտարարությունների հիմքով քրեական վարույթը նախաձեռնվել է Հակակոռուպցիոն կոմիտեում՝ այս տարվա սեպտեմբերի 11-ին: Այն նախաձեռնվել է ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով: Խոսքը պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու մասին է, երբ արարքի հետեւանքով պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Այս արարքի համար Քրեական օրենսգիրքը նախատեսում է ազատազրկում՝ 5-ից 10 տարի ժամկետով:

Այսպիսով, Հայկ Սարգսյանի հրապարակային հայտարարությունները ոչ միայն ներքաղաքական աղմուկ են բարձրացրել իշխող ուժում, այլեւ տեղափոխվել են քրեաիրավական հարթություն. դրանցում ներկայացված հանգամանքներն այժմ Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթի առարկա են: Ուշագրավ է, որ զուգահեռ գործընթաց է ընթանում նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում: ՔՊ վարչությունը երեկ քննարկել է նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի վարքագծի հարցը, սակայն առայժմ որեւէ վերջնական որոշում չի կայացվել:

Իշխող խմբակցության մեր աղբյուրները նշում են, որ քննարկումների արդյունքում չի բացառվում նաեւ Հայկ Սարգսյանին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից հեռացնելու տարբերակը: Ստացվում է՝ մի կողմից՝ Հայկ Սարգսյանի հրապարակած տեղեկությունների հիմքով Հակակոռուպցիոն կոմիտեում քրեական վարույթ է նախաձեռնվել, մյուս կողմից՝ հենց Սարգսյանի վարքագիծն է դարձել ՔՊ վարչության քննարկման առարկա:

Իսկ թե ով է չարաշահել իր դիրքը, ում դեմ է հարուցված վարույթը, դեռ չեն գաղտնազերծում. Ալեն Սիմոնյանի՞, Հայկ Ղալումյանի՞, Հակոբ Սիմիդյանի՞, թե՞ հայտարարությունների հեղինակ Հայկ Սարգսյանի:

Ք. Մ.

ԼՈՒՐԵՐ

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ

Պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, այդ արարքին օժանդակելու, պաշտոնեական կեղծիք կատարելու եւ կեղծ փաստաթուղթ օգտագործելու դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել է ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի եղբայրը՝ Հենրիկ Աբրահամյանը: Երեկ վաղ առավոտյան ArmLur.am-ը հայտնել էր, որ ձերբակալել են Հովիկ Աբրահամյանի եղբորը՝ Հենրիկ Աբրահամյանին: Նկատենք, որ Հենրիկ Աբրահամյանը առաջին անգամ չէ իրավապահների տեսադաշտում: Նա տարբեր տարիներին ղեկավարել է Արտաշատի գինու գործարանը, ապա 1999-2008 թվականներին եղել է Ազգային ժողովի պատգամավոր: Նրա անունը կապվել է մի շարք բիզնեսների հետ՝գինու արտադրություն, շինանյութերի արտադրություն, ձկնաբուծություն: Մասնավորապես՝ «Արտաշատ Վինկոն», «Ջաս-Բետոն Շին», «Մերի Ֆիշ» ընկերությունների հետ: 2018 թվականին Մխչյանի տարածքում հայտնաբերված մեծ քանակությամբ զենք-զինամթերքի գործով Հենրիկ Աբրահամյանը կալանավորվել էր: 2022 թվականին դատարանը նրան մեղավոր է ճանաչել ապօրինի զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու եւ պահելու համար, դատապարտել 2 տարվա ազատազրկման, սակայն համաներմամբ նա ազատվել էր պատիժը կրելուց:

ՄԵՔԵՆԱ Է ԳՌՂԱՑԵԼ

Սեպտեմբերի 14-ին՝ ժամը 23-ին, ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել Արմավիրի մարզի Արեւիկ գյուղի մի բնակիչ եւ հայտնել, որ գողացել են իր կողմից շահագործվող «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան: Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնից մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ մեքենան գողացել են ժամը 17:30-ից 20:30-ն ընկած ժամանակահատվածում՝ օգտվելով դռները բաց լինելու հանգամանքից: Արմավիրի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ: Համայնքային ոստիկանների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել է Արեւիկ գյուղի 42-ամյա բնակիչը: Հաջորդ օրը նա հրավիրվել է բաժին, իրավապահների բացատրական աշխատանքի արդյունքում խոստովանել արարքը եւ հայտնել, որ մեքենան իր տան բակում է:

«ԴԻԽԼՈՖՈՍ»

ՍԱՏՄ-ն վերահսկողություն է իրականացրել սննդամթերքի վրա միջատասպան միջոց կիրառելու վերաբերյալ տարածված տեսանյութի հիման վրա Սոցիալական ցանցերում տարածված եւ հանրային հնչեղություն ստացած տեսանյութի հիման վրա, որտեղ քաղաքացին պնդում է, թե տեսել է ինչպես է պտուղ-բանջարեղենի խանութի (Երեւան, Սարյան 33/4) աշխատակիցը միջատասպան «Դիխլոֆոս» տեսակի նյութը փչում վաճառվող մրգերի վրա, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արագ արձագանքման բաժինը ձեռնարկել է ԱՆՀԱՊԱՂ վերահսկողական միջոցառումներ, տեղում վերցվել են նմուշներ եւ տրվել լաբորատոր փորձաքննության: Տեսչական մարմինը հանրությանը լրացուցիչ կտեղեկացնի իրականացված վերահսկողության եւ լաբորատոր հետազոտության արդյունքների մասին:

● *Սեպտեմբերի 7-ից 14-ը մայրաքաղաքում ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 98 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

7 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԵՎ ՀԵՐՔՈՒՄ, ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Բերդի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության եւ անշարժ գույքի կառավարման բաժնի պետ Վաղարշակ Հակոբյանը քաղաքացիական հայց է ներկայացրել ընդդեմ ծագումով Բերդից լրագրող Էդգար Բաբայանի: Հայցվորը դատարանից խնդրել է՝

1. Էդգար Վարդանի Բաբայանից հօգուտ Վաղարշակ Ռոբերտի Գրիգորյանի բռնագանձել 4,000,000.00 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության հետեւանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

2. Էդգար Վարդանի Բաբայանից հօգուտ Վաղարշակ Ռոբերտի Գրիգորյանի բռնագանձել 3,000,000.00 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի հետեւանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

3. Վաղարշակ Ռոբերտի Գրիգորյանի պատիվն, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տեղեկությունը եւ ներկայացված հերքման տեքստը տեղադրել «Թիվ 1 Մեդիա» ՍՊ ընկերությանը պատկանող tiv1.am կայքում, վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «Հերքում /опровержение» խորագրի ներքո՝ հրապարակել հետեւյալ բովանդակությամբ. «Տեղեկացնում ենք 29.11.2025 թվականին https:// tiv1.am/ կայքում հրապարակված «,Как долго центральная власть будет закрывать глаза на то, что Берд живёт в режиме параллельного государства?» հոդվածում Վաղարշակ Ռոբերտի Գրիգորյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող «человека с многолетним шлейфом уголовных эпизодов», «является фигурантом прошлых дел и потенциальным участником новых», ,ключевой чиновник в Берде - фигурант уголовных дел», «систематических манипуляциях с документами», «десятки сигналов о нарушениях» արտահայտությունը չի համապատասխանում իրականությանը եւ հանդիսանում է ապատեղեկատվություն, տարածված ապատեղեկատվության համար հայցում ենք Վաղարշակ Գրիգորյանի ներողամտությունը: Հայցվորը խնդրել է նաեւ ներողության հետեւյալ տեքստը տեղադրել է. Բաբայանին պատկանող «Эдгар Бабаян» անվամբ Ֆեյսբուքյան էջում. «Իմ կողմից Վաղարշակ Գրիգորյանին վերագրված բոլոր, այդ թվում՝ կատարված հանցագործությունների, պաշտոնեական կեղծիքի եւ չարաշահումների, պետական եւ համայնքային հողերի յուրացման, կոռուպցիայի, Բերդ համայնքի զարգացմանը խոչընդոտելու, ծրագրերը խափանելու գործողությունները հանդիսանում են զրպարտություն, չեն համապատասխանում իրականությանը, ինչի համար եւս հայցում եմ Վաղարշակ Ռոբերտի Գրիգորյանի ներողամտությունը»: Երեւանի քաղաքացիական դատարանում այդ հայցով դատավարություն է ընթանում, ներկայացվել են մի շարք միջնորդություններ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԴԱՏԱՎՈՐ ԼԵՆԴՐՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել դատավորների հայտարարագրած ունեցվածքը՝ ուսումնասիրելով նրանց 2025 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրերը:

Այս անգամ մեր ուշադրության կենտրոնում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Լենդրուշ Հովհաննիսյանը, որը պաշտոնը ստանձնել է 2022 թվականի ապրիլի 4-ին:

Անշարժ գույք

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբում Լենդրուշ Հովհաննիսյանն ունեցել է Արմավիրում գտնվող բնակարան, որը ձեռք է բերել 2003 թվականի նոյեմբերի 4-ին: Գույքը համատեղ սեփականության իրավունքով է:

2025 թվականի ընթացքում դատավորը նոր անշարժ գույք է ձեռք բերել: Մասնավորապես, հոկտեմբերի 16-ին նա 6 մլն դրամով ավտոկայանատեղի է գնել Կոտայքի մարզի Նաիրի համայնքում:

Բացի այդ, մայիսի 19-ին Հովհաննիսյանը նույն՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքում 34 մլն 663 հազար դրամով բնակարան է ձեռք բերել:

Այսպիսով, միայն 2025 թվականին դատավորը անշարժ գույքի ձեռքբերման համար հայտարարագրել է ընդհանուր 40 մլն 663 հազար դրամ:

Տարվա վերջում նրա հայտարարագրում առկա են երեք անշարժ գույք՝ 2003 թվականին ձեռք բերված Արմավիրի բնակարանը, 2025 թվականին ձեռք բերված Նաիրի համայնքի բնակարանը եւ ավտոկայանատեղին:

Ավտոմեքենա

Լենդրուշ Հովհաննիսյանը 2025 թվականի սկզբում ունեցել է 2007 թվականի արտադրության LEXUS մակնիշի մարդատար ավտոմեքենա: Այն ձեռք է բերել 2019 թվականի հոկտեմբերի 3-ին՝ գնման եղանակով: Տարվա ընթացքում նոր տրանսպորտային միջոց չի ձեռք բերել եւ չի օտարել: Նույն LEXUS-ը առկա է նաեւ տարվա վերջում:

Դրամական միջոցներ

2025 թվականի սկզբում դատավորի բանկային հաշիվներում առկա են եղել 534 հազար 624.4 դրամ, 72 հազար դրամ եւ 91.12 ԱՄՆ դոլար, ինչպես նաեւ երկու այլ դրամային հաշիվներ՝ զրոյական մնացորդով:

Տարվա վերջում հաշիվներից մեկում առկա է եղել 8 հազար 707 դրամ, մյուսում՝ 220 հազար դրամ, մեկ դոլարային հաշվում մնացորդը զրոյացել է, մեկ այլ հաշվին առկա է եղել 1 մլն 220 հազար դրամ, իսկ եւս մեկ հաշվում՝ 72 հազար դրամ:

Բացի բանկային միջոցներից, դատավորը տարվա սկզբում եւ վերջում հայտարարագրել է 500 հազար դրամ կանխիկ գումար:

Հայտարարագրում արժեթղթերի, այլ ներդրումների, բանկային ավանդների, էլեկտրոնային հաշիվների եւ կրիպտոարժույթի վերաբերյալ տվյալներ չկան:

Եկամուտ

Լենդրուշ Հովհաննիսյանը 2025 թվականին հայտարարագրել է ընդհանուր 18 մլն 155 հազար 601 դրամ եկամուտ:

Դրանից 12 մլն 970 հազար 861 դրամը կազմել է աշխատանքի վարձատրությունը եւ դրան հավասարեցված այլ վճարումները, որոնք ստացել է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմից՝ Դատական դեպարտամենտից:

Բացի այդ, «Բուկինիստ» գրախանութների ցանցից նա ստացել է 180 հազար դրամ, «Զանգակ գրատուն»-ից՝ 60 հազար դրամ, ՀՀ ՊԵԿ-ից՝ 3 մլն 814 հազար 290 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա հիմնադրամից՝ 1 մլն 130 հազար 450 դրամ՝ քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամտի տեսքով:

Վարկեր եւ ծախսեր

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Լենդրուշ Հովհաննիսյանի վարկերի մայր գումարի մնացորդը կազմել է ընդհանուր 45 մլն 436 հազար 385.2 դրամ: Դրանցից մեկի մնացորդը եղել է 29 մլն 893 հազար 263.7 դրամ, մյուսինը՝ 15 մլն 543 հազար 121.5 դրամ: Երկու վարկերի նպատակային նշանակությունը հայտարարագրում կապված է բնակարանի հետ: Տարվա ընթացքում վարկի մարմանն ուղղված վճարումների չափը կազմել է 6 մլն 574 հազար 232 դրամ: Այլ՝ 2 մլն դրամը գերազանցող միանվագ ծախսերի վերաբերյալ տվյալներ հայտարարագրում չկան:

Այսպիսով, 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Լենդրուշ Հովհաննիսյանի ունեցվածքում տարվա ընթացքում ավելացել են 34 մլն 663 հազար դրամ արժողությամբ բնակարանն ու 6 մլն դրամ արժողությամբ ավտոկայանատեղին, մինչդեռ նրա 2007 թվականի LEXUS-ը պահպանվել է: Նրա տարեկան եկամուտը կազմել է 18 մլն 155 հազար 601 դրամ, իսկ տարեվերջի վարկային պարտավորությունները՝ 45 մլն 436 հազար 385.2 դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՈՎԻ ՄԱՏՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ՝ 520 ՄԻԼԻՈՆ

Ամբողջ աշխարհում սովյալ մարդկանց թիվը մինչեւ 2030 թվականը կարող է հասնել 520 միլիոնի՝ Մերձավոր Արեւելքում հակամարտության պատճառով: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այդ մասին «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Ռուսաստանի հետ կապերի գծով բաժնի ղեկավար Օլեգ Կոբյակովը: «Հաշվի առնելով Մերձավոր Արեւելքի հակամարտության ազդեցությունը՝ մինչեւ 2030 թվականը 510-520 միլիոն մարդ առաջվա պես կբախվի սովի խնդրին», - ասել է Կոբյակովը՝ նշելով, որ մինչեւ ճգնաժամն այդ ցուցանիշը գնահատվում էր 503 միլիոն:

Նա ընդգծել է, որ կանխատեսումներ անելիս հաշվի չեն առնվել այլ հնարավոր ոչ բարենպաստ այնպիսի գործոններ, ինչպիսիք են ծայրահեղ եղանակային երեւույթները, որոնք կարող են խորացնել իրավիճակը: «Այսպիսով, Մերձավոր Արեւելքի ճգնաժամը կարող է լրացուցիչ այլ երկրների վրա ազդել էներգակիրների եւ պարարտանյութերի գների աճի միջոցով», - եզրափակել է Կոբյակովը:

Փետրվարի 28-ին ԱՄՆ-ն եւ Իսրայելը սկսեցին հարվածներ հասցնել Իրանի տարածքի օբյեկտներին, ինչին իրանական կողմը պատասխանեց իր հարվածներով: Հակամարտության սրման պատճառով Հորմուզի նեղուցով նավագնացությունը գործնականում դադարեցվել է: Այս ջրային ուղին նավթի, նավթամթերքի եւ հեղուկացված բնական գազի՝ համաշխարհային շուկա մատակարարումների առանցքային երթուղի է: Սրա հետեւանքով աշխարհի երկրների մեծ մասում վառելիքի գները բարձրացել են:

ԵՄ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆ

Եվրոպացի առաջնորդները շտապ միջոցներ են ձեռնարկում՝ զսպելու նավթի գների աճը, քանի որ Մերձավոր Արեւելքում հակամարտության սրման ֆոնին Սաուդյան Արաբիայից մատակարարումները հետաձգվում կամ չեղարկվում են: Այդ մասին տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Euronews-ը:

Հութիների եւ իրաքյան ուժերի հարձակումից հետո Սաուդյան Արաբիան ստիպված եղավ ժամանակավորապես փակել 1200 կիլոմետրանոց Արեւելք-Արեւմուտք խողովակաշարը, որը Հորմուզի նեղուցը շրջանցող հիմնական երթուղին է: Այդ խափանումները սպառնում են խաթարել համաշխարհային նավթի մատակարարումների մինչեւ 4%-ը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սաուդյան Արաբիայի նավթի արտադրությունը օգոստոսին արդեն իսկ զգալիորեն նվազել էր: Միեւնույն ժամանակ, Brent տեսակի նավթի մեկ բարելի գինն այժմ կազմում է 113 դոլարից բարձր: Ֆրանսիայի եւ Իտալիայի համար էներգակիրների գների աճը դառնում է ներքին քաղաքականության լուրջ խնդիր, քանի որ ընտրողները կառավարությունների աշխատանքը գնահատում են՝ հիմնվելով գնողունակության վրա: Ֆրանսիայում էներգակիրների եւ վառելիքի գների աճը արդեն իսկ խթանում է սպառողների անհանգստությունը: Օգոստոսին գնաճը հասել է 2.7%-ի, իսկ էներգետիկան մնում է հիմնական շարժիչ ուժը: Իտալիան նմանատիպ խնդրի առջեւ է կանգնած: Օգոստոսին գնաճը հասել է մինչեւ 3.3%, բենզինի եւ դիզելային վառելիքի գները զգալիորեն աճել են:

● *Մարզերում սեպտեմբերի 7-ից 14-ը ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 45 անձ:*

ԼՈՒՐԵՐ

ՌԴ ԱԳՆ–Ն ԲՈՂՈՔ Է ՀԱՅՏՆԵԼ

Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի ժամանակավոր հավատարմատար Դեյնի Դոլակիան կանչվել է ՌԴ ԱԳՆ՝ Լոնդոնի կողմից Կիեւին զինամթերքի մատակարարումների ավելացման կապակցությամբ: Այդ մասին ասվում է Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության հաղորդագրությունում, հաղորդում է ՏԱՍՍ-ը: «Սեպտեմբերի 18-ին Ռուսաստանի ԱԳՆ է կանչվել Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի ժամանակավոր հավատարմատար Դեյնի Դոլակիան, որին վճռական բողոք է հայտնվել Լոնդոնի կողմից կիեւյան վարչակարգին ԱԹՍ-ների եւ սպառազինության այլ համակարգերի մատակարարումների հետագա ավելացման կապակցությամբ»,- նշել են նախարարությունում: «Ընդգծվել է, որ հեռահար հարձակողական սպառազինությունների զանգվածային մատակարարումներով Լոնդոնն իրեն դնում է կիեւյան վարչակարգի արյունալի չարագործությունների մեղսակցի դիրքում, որոնք այլ կերպ, քան ահաբեկչություն եւ ռազմական հանցագործություններ, չեն կարող բնութագրվել»,- հավելել են Ռուսաստանի ԱԳՆ-ում: ԱԳՆ-ում նշել են, որ բրիտանական կողմին պահանջ է ներկայացվել հրաժարվել վարվող էսկալացիոն գծից եւ իր գործողությունները փոխադրել համապատասխան միջազգային պարտավորությունների հուն: Նրան պարզաբանվել են Ուկրաինայի հարցով ապակառուցողական գործողությունների հետ կապված ռիսկերը: «Բրիտանական կողմին ներկայացվել է միջազգային պարտավորությունների ցանկ, որոնք խախտվում են նրա կողմից Կիեւին ցուցաբերվող աջակցության հետեւանքով: Պարզաբանվել են անգլիացիների ապակառուցողական գործողությունների հետ կապված համակարգային ռիսկերը, ինչպես նաեւ նրանց ջանքերի ապարդյունությունը Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի գերազանցության ֆոնին, որոնք պահպանում են ռազմավարական նախաձեռնությունը հատուկ ռազմական գործողության գոտում»,- նշել են գերատեսչությունում:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՄՈԼՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Խուստուփ լեռան տարածքում 2 քաղաքացի է մոլորվել, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Ահազանգով Կապանի հրշեջ-փրկարարական ջոկատից անմիջապես դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Որոնողական աշխատանքներին մասնակցել են 14 փրկարար եւ էկոպարեկային ծառայության մեկ կարգախումբ: Բարդ տեղանքում որոնողական աշխատանքները շարունակվել են ողջ գիշեր: Ծավալուն որոնողական աշխատանքների արդյունքում ժամը 11:00-ի սահմաններում Վաչագան գյուղից 6 կմ դեպի Խուստուփ տանող ճանապարհին՝ Քոլ կոչվող հանդամասին հարակից անտառում, փրկարարները հայտնաբերել են մոլորված քաղաքացիներին:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

Գ

ԻՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ARCA UNIONPAY ՔԱՐՏԵՐ

Arca ազգային վճարային համակարգի եւ UnionPay-ի համագործակցության շրջանակում պաշտոնապես տրվել է Հայաստանում Arca UnionPay քարտերի մեկնարկը:

Կոնվերս Բանկը Հայաստանում առաջիններից իր քարտապաններին հնարավորություն է տալիս ստանալ մեկ քարտ՝ երկու տեղական եւ միջազգային քարտերի հնարավորություններով: Arca UnionPay քարտերի թողարկման մեկնարկի կապակցությամբ հանդիսավոր արարողությունը կայացել է սեպտեմբերի 17-ին: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԿԲ, Armenian Card ազգային վճարային համակարգի, UnionPay International համակարգի, ՀՀ-ում Չինաստանի դեսպանատան, ֆինանսական համակարգի ներկայացուցիչներ:

Կոնվերս Բանկը ներկայացրել է եւ Բանկի բրենդինգով խորհրդանշական քարտը ստորագրել է Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը: Նա նշել է. «Այս նախաձեռնությանը առաջիններից միանալը Կոնվերս Բանկի համար բնական է: Մենք հետեւողականորեն ներդնում ենք նոր տեխնոլոգիաներ եւ ֆինանսական լուծումներ, եւ այս համագործակցությունն այդ մոտեցման շարունակությունն է:

Կոնվերս Բանկի կողմից Arca UnionPay քարտերի թողարկումը հատկապես կարեւորում եմ երկու տեսանկյունից: Առաջինը մեր հաճախորդների համար ստեղծվող հավելյալ արժեքն է: Եթե նախկինում Arca քարտի կիրառելիությունը հիմնականում սահմանափակվում էր Հայաստանի վճարային ենթակառուցվածքով, ապա համատեղ քարտով հնարավոր է գործարքներ կատարել նաեւ UnionPay-ի միջազգային ցանցում՝ օգտվելով երկու համակարգերի առավելություններից:

Մյուս կարեւոր ուղղությունը Հայաստանի ազգային վճարային համակարգի միջազգային ինտեգրումն է: Arca-ի եւ UnionPay-ի համագործակցությամբ այն կապվում է միջազգային լայն ցանցի հետ՝ ընդլայնելով հայկական բանկերի եւ նրանց հաճախորդների հասանելիությունը»:

Arca-ի տնօրեն Վարդան Խաչատրյանի խոսքով՝ «Այս նախագիծն աննախադեպ է ոչ միայն Arca-ի, այլեւ Հայաստանի վճարահաշվարկային էկոհամակարգի համար: Երկու ազգային վճարային համակարգերի՝ Arca-ի եւ UnionPay-ի համագործակցության արդյունքում հայկական բանկերն առաջին անգամ հնարավորություն են ստանում թողարկելու համատեղ քարտ, որի սպասարկումը Հայաստանում իրականացվում է Arca-ի կանոններով, իսկ երկրից դուրս՝ UnionPay-ի սպասարկման ցանցում:

Սա համագործակցության առաջին փուլն է. նախատեսվում են նաեւ այլ լուծումներ, այդ թվում՝ արագ դրամական փոխանցումների ուղղությամբ»:

UnionPay International-ի բիզնեսի զարգացման դեպարտամենտի գլխավոր տնօրենի տեղակալ Սյան Յուն ասել է. «Arca-ի հետ համագործակցությունը կարեւոր քայլ է UnionPay-ի ներկայության ընդլայնման եւ Հայաստանի վճարային շուկայի հետ ավելի սերտ ինտեգրման ճանապարհին: Համատեղ քարտի գործարկմամբ մենք միավորում ենք Arca-ի տեղական փորձն ու ենթակառուցվածքը UnionPay-ի միջազգային ցանցի հետ՝ Հայաստանի քարտապաններին հասանելի դարձնելով մեր ծառայություններն աշխարհի տարբեր երկրներում:

Մենք բարձր ենք գնահատում Arca-ի, Կոնվերս Բանկի եւ ծրագրին միացած մյուս գործընկերների հետ համագործակցությունը եւ վստահ ենք, որ սա երկարաժամկետ գործընկերության նոր հնարավորությունների սկիզբն է»:

Arca Unionpay քարտերը Կոնվերս Բանկում արդեն հասանելի են:

010 511 211, conversebank.am

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԱՎԵԼԻՆ, ՔԱՆ ՊԱՐԶԱՊԵՍ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Գ

Բարդ հաշվարկներ, համառ պայքար եւ մեծ հաղթանակներ. երեխաների շրջանում սիրված Junius ֆինանսական մրցաշարը մոտեցավ իր ավարտին: Խաղային ու հագեցած մթնոլորտում մասնակիցները սովորեցին ճիշտ տնօրինել ու խնայել գումարը, ճանաչել ու պաշտպանվել ժամանակակից ֆինանսական գեղծարարություններից, ինչպես նաեւ արդյունավետ կիրառել թվային ֆինանսական գործիքները:

Իդրամի եւ IDBank-ի հաղորդակցության եւ կայուն զարգացման վարչության ղեկավար Տաթեւիկ Վարդեւանյանն ընդգծեց Junius ֆինանսական մրցաշարի դրական ազդեցությունը մասնակիցների շրջանում:

«Յուրաքանչյուր նոր մրցափուլի ընթացքում մասնակիցների թիվն աճում էր, եւ, ի ուրախություն մեզ, ամեն անգամ նոր երեխաներ էին միանում մրցաշարին: Ունեինք նաեւ մրցաշարի «հնաբնակներ», որոնք մասնակցում էին բոլոր խաղերին՝ մշտապես ձգտելով լինել առաջատարների թվում: Խաղի կանոնների համաձայն՝ մեկ անգամ հաղթելուց հետո մասնակիցը հաջորդ երեք ամիսների ընթացքում չի կարող կրկին հաղթող ճանաչվել եւ ստանում է միայն խրախուսական մրցանակ: Այնուամենայնիվ, այս անգամ եւս ունեցանք խրախուսական մրցանակներ ստացող մասնակիցներ, որոնք անկեղծորեն ուրախ էին նաեւ այդ մրցանակների համար», - նշել է Տաթեւիկ Վարդեւանյանը:

Երեխաների աճող հետաքրքրությունը, մեծ ոգեւորությունն ու ձեռք բերած գիտելիքները հերթական անգամ ցույց են տալիս, որ Idram Junior հավելվածում հասանելի Junius ֆինանսական մրցաշարը ֆինանսապես գրագետ սերունդ ձեւավորելուն նպաստող եւ ապագա հաջողությունների ամուր հիմքերը դնող ռազմավարական նախաձեռնություն է:

Idram Junior հավելվածը նախատեսված է 8-16 տարեկան օգտատերերի համար: Հավելվածի միջոցով երեխաները հնարավորություն են ստանում օգտվել անկախիկ միջոցներից, անհպում վճարումներ կատարել, խնայել եւ զարգացնել ֆինանսական գրագիտությունը, իսկ ծնողները՝ վերահսկել երեխաների ֆինանսական գործողությունները ժամանակակից եւ անվտանգ գործիքի միջոցով:

Շնորհավորում ենք բոլոր մասնակիցներին եւ մաղթում նորանոր հաղթանակներ:

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՖԻԼՄ

ՋԵՆԻՖԵՐ ԼՈՊԵՍԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԷԿՐԱՆ

Ջենիֆեր Լոպեսը իր լասվեգասյան շոուն այս տոնական սեզոնին պատրաստվում է հասցնել հեռուստադիտողին: CBS-ն ու Paramount+-ը սեպտեմբերի 17-ին հայտարարել են, որ «THE JLO SHOW: Live in Las Vegas» համերգային ֆիլմը կցուցադրվի Գոհաբանության օրը (Thanksgiving) երեկոյան:

Ֆիլմը նկարահանվել է Լոպեսի՝ Լաս Վեգասում կայացած համերգային ռեզիդենցիայի ընթացքում եւ ներկայացնում է նրա ավելի քան երկու տասնամյակ տեւած երաժշտական կարիերայի ամենահայտնի ստեղծագործությունները՝ համադրելով անձնական պատմություններն ու թատերական լուծումները:

Ֆիլմի հրապարակված թիզերում Լոպեսը պատմում է, թե ինչպես է սկսվել իր սերը բեմի եւ մյուզիքլների նկատմամբ:

«Երբ փոքր էի, ժամերով նստում էի հեռուստացույցի առաջ եւ մյուզիքլներ դիտում»,- ասում է երգչուհին՝ հիշելով իր մանկությունը: Թիզերում ցուցադրվում է փոքրիկ աղջիկ, որը հեռուստացույցով դիտում է «West Side Story»-ը:

«Հենց այդտեղից ամեն ինչ սկսվեց ինձ համար: Իսկ տարիներ անց իմ ամբողջ կյանքը դարձավ շոու»,- ասում է Լոպեսը՝ նախքան կադրերը տեղափոխվում են Լաս Վեգասի բեմ:

Երգչուհու խոսքով՝ ներկայացման կենտրոնում իր ճանապարհն է՝ Բրոնքսից մինչեւ միջազգային ճանաչում: Շոուն միավորում է նրա ամենամեծ հիթերը, անձնական պատմությունները, կենդանի նվագակցությունը, վոկալային անսամբլը եւ 16 պարող:

«The JLO Show»-ը բաղկացած է չորս գործողությունից՝ «I'll See You in My Dreams», «Tales from Manhattan», «Kiss Kiss, Kill Kill» եւ «Shall We Dance»:

Համերգային ֆիլմում հնչում են Լոպեսի կարիերայի տարբեր փուլերի հայտնի երգերը, այդ թվում՝ «Waiting for Tonight», «Jenny from the Block», «Love Don't Cost a Thing», «Get Right», «On the Floor» եւ «Let's Get Loud»:

Բացի սեփական հիթերից՝ շոուն ներառում է ժամանակակից փոփ երգեր, Բրոդվեյի ստանդարտներ եւ հարգանքի տուրք Լաս Վեգասի լեգենդար արտիստներին: Այս ամենը ներկայացմանը հաղորդում է թատերական բնույթ՝ ընդգծելով Լոպեսի երկար տարիների սերը մյուզիքլների նկատմամբ:

Լոպեսը սահմանափակ ռեզիդենցիան սկսել էր The Colosseum at Caesars Palace-ում՝ 2025 թվականի Ամանորի շաբաթվա ընթացքում: Ռեզիդենցիայի շրջանակում կայացել է 12 համերգ, որոնք, ըստ հաղորդագրության, ամբողջությամբ վաճառվել են: Երկրպագուներ շոուն դիտելու համար ժամանել էին աշխարհի տարբեր երկրներից:

Երգչուհին ռեզիդենցիան փակել է մարտի 28-ին, իսկ վերջին ելույթն այժմ կհայտնվի հեռուստաէկրաններին:

«THE JLO SHOW: Live in Las Vegas»-ի պրեմիերան կկայանա նոյեմբերի 26-ին՝ ժամը 20:00-ին ET/PT, CBS հեռուստաալիքով եւ Paramount+-ում: Ֆիլմի ընդլայնված տարբերակը հասանելի կլինի բացառապես Paramount+ հարթակում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ

UFC-ի թեթեւ քաշային կարգի դասակարգման երկրորդ համար, Հայաստանը ներկայացնող Արման Ծառուկյանը բացել է փակագծերն իր ապագայի եւ կարիերայի հնարավոր զարգացումների վերաբերյալ: Բրազիլացի Մաուրիսիո Ռուֆիի դեմ սպասվող կարեւորագույն մենամարտին ընդառաջ՝ Ծառուկյանը հստակեցրել է, թե ինչ է իրեն սպասվում հավանական հաղթանակից հետո:

Ըստ armsport-ի՝ «Матч ТВ»-ին տված հարցազրույցում հայ մարզիկը հաստատել է, որ հաջողության հասնելու դեպքում իր հաջորդ քայլը լինելու է տիտղոսային մենամարտը.

«100 տոկոսով վստահ եմ, որ այս մենամարտից հետո պայքարելու եմ չեմպիոնական գոտու համար: UFC-ի ղեկավարության հետ արդեն իսկ ունեցել ենք նման խոսակցություն»,- ընդգծել է Ծառուկյանը:

Անդրադառնալով շրջանառվող այն լուրերին, թե Ջասթին Գեյջիի հնարավոր հեռանալուց հետո գոտին կարող է թափուր մնալ, Արմանը նշել է, որ այս պահին չի ցանկանում կենտրոնանալ նման մանրամասների վրա: Նրա գլխավոր նպատակն առաջիկա հանգստյան օրերին կայանալիք դիմակայությունն է:

«Անկեղծ ասած, հիմա այդ մասին չեմ մտածում, քանի որ ինձ շատ լուրջ փորձություն է սպասվում: Կենտրոնացած եմ բացառապես Ռուֆիի վրա, իսկ թե ինչ կլինի հետո, այս պահին ինձ համար միեւնույնն է: Նախ պետք է գործն անել, նոր միայն խոսել ապագայի մասին»,- նշել է մարտիկը:

Արմանը նաեւ հավելել է, որ տիտղոսային մենամարտը նախատեսվում է 2027 թվականի սկզբին, եւ ինքը լիովին վստահում է կազմակերպության խոստմանը՝ չունենալով որեւէ մտավախություն:

Հիշեցնենք, որ Արման Ծառուկյանի եւ Մաուրիսիո Ռուֆիի դիմակայությունը կկայանա սեպտեմբերի 19-ին ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում: Այն կլինի UFC 331 մրցաշարի երկրորդ գլխավոր (co-main event) իրադարձությունը:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է «ՓՅՈՒՆԻԿ»

«Փյունիկ» ՖԱ-ն նոր համալրում ունի. թիմին է միացել Տաջիկստանը ներկայացնող հարձակողական ոճի կիսապաշտպան Ալիշեր Ռախիմովը:

Այդ մասին հայտնում է երեւանյան ակումբի մամուլի ծառայությունը:

24-ամյա ֆուտբոլիստն իր պրոֆեսիոնալ կարիերան սկսել է Տաջիկստանի «Բարկչի» թիմում: 2022 թվականին նա տեղափոխվել է ռուսական Մեդիալիգայում հանդես եկող Մոսկվայի «Ամկալ», ապա ելույթները շարունակել է նույն լիգան ներկայացնող «Բրոուք Բոյսում»:

2025 թվականի մարտին Ալիշեր Ռախիմովը կարիերան շարունակել է Բելառուսի «Սմորգոնում», որտեղ մի քանի ամիս հանդես գալուց հետո տեղափոխվել է բելառուսական մեկ այլ թիմ՝ «Նավթան»: Ընդհանուր առմամբ, նա Բելառուսի Բարձրագույն լիգայում անցկացրել է 22 հանդիպում եւ դարձել 4 գոլի հեղինակ:

Ալիշեր Ռախիմովի նախորդ թիմը Տաջիկստանի Բարձրագույն լիգան ներկայացնող «Ռավշանն» էր, որի կազմում անցկացրել է 8 խաղ ու դարձել մեկ գոլային փոխանցման հեղինակ:

Ալիշերը մեկ հանդիպում է անցկացրել նաեւ Տաջիկստանի Մ-23 տարեկանների հավաքականում:

Ալիշեր Ռախիմովը դեռեւս 2025 թվականի հունվարին «Փյունիկի» կազմում մասնակցել էր ԱՄԷ-ում անցկացված ուսումնամարզական հավաքին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սեպտեմբերի 17-ին կայացան ՈՒԵՖԱ-ի Եվրոպա լիգայի 2026/2027 մրցաշրջանի լիգայի փուլի առաջին տուրի վերջին հանդիպումները:

«Յուվենտուսը» Թուրինում ընդունել էր «Նեյմիգենին»: Թուրինյան ակումբն արդեն առաջին խաղակեսում հսկայական՝ 3 գնդակի առավելություն ստացավ. գոլերով աչքի ընկան Գոնսալեսը, Ալայբեգովիչն ու Վոլտեմադեն: Երկրորդ խաղակեսում թուրինցիները եւս երկու գոլ ուղարկեցին մրցակցի դարպասը Ցելիկի ու Կոլո Մուանիի ջանքերով: 5-0, եւ Սպալետիի թիմը ԵԼ-ում մեկնարկում է գերվստահ հաղթանակով, գրում է armsport-ը:

«Քրիսթալ Փելասը» եւս հետ չմնաց թուրինցիներից ու, կարելի է ասել, եւս ամեն ինչ որոշեց դեռ առաջին խաղակեսում. «Լեխը» Լոնդոնում սեփական դարպասն 4 ընդունեց գնդակ: Տանտերերի կազմում աչքի ընկան Պինոն, Ռիչարդսը, Լարսենը եւ Նկետիան:

Սան Սեբաստիանում «Ռեալ Սոսյեդադը» ընդունեց «Բորնմութին». անգլիական ակումբը, որը նորամուտը նշեց եվրագավաթներում, հաղթեց արտագնա խաղում 2-1 հաշվով. հաղթող թիմի կազմում գոլերն իրենց հաշվին գրանցեցին Կլյուվերտն ու Ռայանը, տանտերերի կազմում՝ Գոմեսը:

Մյուս հանդիպումների արդյունքները.

«Բեշիքթաշ» - «Մարսել» / 4-1
«Սելթիկ» - «Ֆերենցվարոշ» / 1-3
«Լիլեստրյոմ» - «Տորենսե» / 1-2
«Վիկտորիա» - «Ռոյալ» / 0-3

ԳՈԼԱՌԱՏ ԽԱՂ

Սեպտեմբերի 17-ին ֆուտզալի Հայաստանի ազգային հավաքականը Մոլդովայում երկրորդ ընկերական հանդիպումն անցկացրեց տեղի ազգային թիմի հետ եւ հաղթեց 4-3 հաշվով:

Մեր թիմի կազմում գոլերը խփեցին Ալբերտ Գրիգորյանը, Պուտրուս Վասիլեւը, Միքայել Ղանդիլյանն ու Միհրան Դերմենջյանը: Գրիգորյանն ու Վասիլեւն առաջին գոլերը խփեցին ազգային թիմի կազմում, գրում է armsport-ը:

Նշենք, որ սեպտեմբերի 15-ին ֆուտզալի Հայաստանի ազգային հավաքականն առաջին ընկերական հանդիպումն անցկացրեց Մոլդովայի թիմի հետ: Դիտարժան պայքարում անցած խաղն ավարտվեց մարտական ոչ-ոքիով (3-3): Անտոնիո Ֆերնանդեսի գլխավորած թիմի կազմում փայլուն հանդիպում անցկացրեց Միհրան Դերմենջյանը՝ դառնալով հեթ-տրիկի հեղինակ:

Հիշեցնենք, որ այս ընկերական հանդիպումներով ֆուտզալի Հայաստանի հավաքականը նախապատրաստվում է աշխարհի 2028 թվականի առաջնության որակավորման հիմնական փուլին: Մեր ընտրանին ընդգրկված է 1-ին խմբում եւ մրցելու է Հունգարիայի ու Ծվեդիայի հավաքականների հետ: Որակավորման հիմնական փուլում Հայաստանի հավաքականը պայքարը կմեկնարկի հոկտեմբերի 20-ին՝ սեփական հարկի տակ ընդունելով Հունգարիային:

Հավաքականի գլխավոր մարզիչ Անտոնիո Ֆերնանդեսի խոսքով՝ Մոլդովայի դեմ այս խաղերը հրաշալի հնարավորություն են նորեկներին փորձարկելու, խաղային սկզբունքները վերականգնելու եւ առաջիկա պաշտոնական հանդիպումներին պատշաճ պատրաստվելու համար:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում սեպտեմբերի 20-ին՝ ժամը 16:00-ին, կկայանա «Անխելք մարդը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փուլերով է իրականացվում երեխայի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԶԱՊԿ) եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ) գնահատումը:

Համլետ Գրիգորյան, 45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Սանի՝ ԿԶԱՊԿ գնահատումը բաղկացած է երեք փուլից՝

1) 1-ին փուլ՝ սանի կրթական ծրագրերին

2) 2-րդ փուլ՝ սանի զարգացման հնարավորությունների բացահայտում եւ գնահատում,

3) 3-րդ փուլ՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:

Սովորողի ԿԱՊԿ գնահատումը բաղկացած է երեք փուլից՝

1) 1-ին փուլ՝ սովորողի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում,

2) 2-րդ փուլ՝ սովորողի զարգացման հնարավորությունների բացահայտում եւ գնահատում,

3) 3-րդ փուլ՝ կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:

ԿԶԱՊԿ եւ ԿԱՊԿ գնահատման երեք փուլերի ավարտից հետո սանի եւ սովորողի ԿԶԱԿՊ եւ ԿԱՊԿ պայմանների կարիքի վերաբերյալ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կազմում է արձանագրություն եւ տալիս եզրակացություն:

ԿԶԱՊԿ եւ ԿԱՊԿ գնահատումը տեւում է 5-ից 25 աշխատանքային օր:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ի՞նչ ընթացակարգով է իրականացվում դատապարտյալներին ներում շնորհելու գործընթացը:

Գրիգոր Սահակյան, 65 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Սահմանադրության 135-րդ հոդվածով սահմանվում է, որ Հանրապետության նախագահը օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը: «Ներման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ Հանրապետության նախագահը սահմանադրորեն ամրագրված իր լիազորությունն իրականացնում է միայն ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին վարչապետի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա, որին կցվում է նաեւ ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, անձնական գործը եւ Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում): Ներման խնդրագիր ներակայացնելու իրավունք ունի հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր անձ՝ միայն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Ներման խնդրագիրը քննարկելու նպատակով՝ ՀՀ արդարադատության նախարարությունը ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ կազմում է անձնական գործ եւ ներկայացնում վարչապետին: Վարչապետը, դատապարտյալի վերաբերյալ ստացված անձնական գործն ուղարկում է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով՝ ներման խնդրագրի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո վարչապետը Հանրապետության նախագահին ներկայացնում է ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, անձնական գործը եւ Հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում): Վերոշարադրյալ առաջարկությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահն ստորագրում է ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը կամ իր առարկություններով այն վերադարձնում վարչապետին:

ՀՀ նախագահի աշխատակազմ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղում գայլերի հարձակման հետեւանքով 450-ից ավելի գառներ ու ոչխարներ են սատկել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 6 + 11 + 24 + 29
	Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 24 + 27
	Կոտայքի նախալեռներ	+ 15 + 17 + 30 + 32
	Գեղարքունիք	+ 6 + 11 + 24 + 28
	Լոռի	+ 7 + 12 + 24 + 28
	Տավուշ	+ 8 + 12 + 25 + 28
	Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 27
	Արագածոտնի նախալեռներ	+ 13 + 17 + 30 + 34

	Արարատ	+ 13 + 17 + 32 + 34
	Արմավիր	+ 11 + 16 + 32 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 24 + 27
	Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 17 + 31 + 34
	Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 22 + 26
	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 27 + 30
	Սյունիքի հովիտներ	+ 14 + 18 + 33 + 35
	Երեւան	+ 17 + 19 + 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*